25 սեպտեմբեր, 2017թ.

«HPE սերվերային սարքավորումների» ձեռքբերման
ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ
Ծածկագիր՝ 17/002

**Բացման ամսաթիվ**՝ 25 սեպտեմբեր, 2017թ.

**Փակման ամսաթիվ**՝ 25 հոկտեմբեր, 2017թ.

1. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա), (այսուհետ՝ «Կազմակերպիչ»), գնառաջարկների ներկայացման բաց մրցույթի միջոցով հրավիրում է Ձեզ (այսուհետ՝ Հայտատու) ներկայացնելու գնառաջարկ «HPE սերվերային սարքավորումների» ձեռքբերման վերաբերյալ:
2. Կազմակերպիչ՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

   Կոնտակտային անձ՝
   Դիանա Տոնոյան
   Գնումների թիմի ղեկավար
   Անվտանգության և ադմինիստրատիվ բաժին/ Գնումների թիմ
   ՀՀ, ք. Երևան, 0023, Ագաթանգեղոսի 2ա
   Հեռ.՝ +374-95-95-03-83,
   Էլ.փոստ՝ diana.tonoyan@finca.am
3. Բաց մրցույթին մասնակցելու պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված են կից Հավելված 1-ում:
4. Առաջարկի պայմանները, ինչպես նաև այլ մանրամասները ներկայացված են կից Հավելված 2-ում (այսուհետ՝ Գնառաջարկ):
5. Հայտատուն ինքնուրույն է հոգում Գնառաջարկի պատրաստման և մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (միասին այսուհետ՝ Մասնակցության հայտ) ներկայացման ծախսերը, իսկ Մրցույթի կազմակերպիչը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցույթի ընթացքից և արդյունքներից:
6. Կազմակերպիչն իրավունք ունի մերժել Մասնակցության հայտը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Կազմակերպչի կողմից սահմանված պայմանները:
7. Գնառաջարկը բնօրինակի և կրկնօրինակի հետ միասին («Բնօրինակ» և «Պատճեն» նշումներով) փակ և կնքված առանձին ծրարներով պետք է հասցեագրվի.

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0023, Ազաթանգեղոսի 2ա
Հեռ. +37410 545-531, +37410 545-532

8. Ծրարների վրա պետք է նշված լինի կազմակերպության անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարը, էլ. փոստը, ղեկավարի անունը, պաշտոնը, մրցույթի անունը և կոդը:
9. Գնառաջարկը պետք է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ հասցեով ոչ ուշ, քան 2017թ. հոկտեմբերի 25-ը, ժամը 12:00 (Երևանի ժամանակով):
10. Գնառաջարկը պետք է ներկայացվի ՀՀ դրամով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառյալ:
11. Գները պետք է լինեն վերջնական ամրագրված և ինչպես մինչև պայմանագրի կնքումը, այնպես էլ պայմանագրի գործողության ընթացքում ենթակա չլինեն փոփոխման, եթե այլ բան չնախատեսվի պայմանագրով:
12. Գնառաջարկը լրացնելիս Հայտատուին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող ապրանքների բովանդակությունը:
13. Գնառաջարկը պետք է վավեր լինի առնվազն 30 օր՝ հաշվարկված գնառաջարկի ներկայացման սահմանված վերջնաժամկետից, սակայն ոչ պակաս, մինչև հաղթողի հետ պայմանագրի կնքումը:
14. Հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ համաձայն Հավելված 2-ում նշված ցանկի:
15. Մրցույթի մեկնարկային գին և նախավճար չի սահմանվում:
16. Սույն մրցույթի հրավերի 9-րդ կետում նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված գնառաջարկները կմերժվեն:
17. Մրցույթի հայտերը բացվելու են 2017թ. հոկտեմբերի 30-ին, ժամը՝ 12:00 «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, 0023, Ազաթանգեղոսի 2ա: Այդ նույն օրը տեղի կունենա մրցույթի հայտերի ամփոփումը:
18. Հայտատուները մրցույթի ամփոփման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը կստանան մրցույթի հայտերի ամփոփումից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
19. Այլ պայմաններ.
    ա) Կազմակերպչի հետ փոխկապակցված Հայտատուների մասնակցությունն արգելվում է,
    բ) հայտերը, որոնք կհամարվեն ըստ էության մրցույթի պայմաններին համապատասխանող, կգնահատվեն ըստ առաջարկում ներկայացված պայմանների:
    գ) Գնահատումը կկատարվի ըստ ներկայացված գնային և տեխնիկական առաջարկների: Տեխնիկական առաջարկն իր մեջ ներառում է առաքման պայմանները, շուկայում զբաղեցրած դիրքը և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆ

դ) մրցույթի հաղթողի հետ կնքվում է պայմանագիր մրցույթի ավարտից և արդյունքների ամփոփումից հետո՝ քսան օրացուցային օրվա ընթացքում:
ե) լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար դիմել հետևյալ հասցեով՝

Անվտանգության և ադմինիստրատիվ բաժին
Գնումների թիմ
«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0023, Ազաթանգեղոսի 2ա
Հեռ. +37410 545-531, +37410 545-532
Էլ.փոստ՝ diana.tonoyan@finca.am



ՀԱՅԱՍՏԱՆ

Հավելված 1

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

1. Գնառաջարկ,
2. Պետական գրանցման վկայականի պատճեն իր ներդիրներով՝ կնքված կազմակերպության կնիքով,
3. Տվյալներ կազմակերպության վավերապայմանների մասին (կցված է),
4. Տնօրենի անձնագրի պատճեն,
5. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (կցված է),
6. Արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF)՝ բոլոր սարքավորումների համար
7. Գործընկեր կազմակերպությունների ցանկ, որոնց հայտատուն տրամադրել է նույնատիպ ապրանքներ/ծառայություններ (առկայության դեպքում),
8. Ամփոփ տեղեկություններ կազմակերպությանը շնորհված վկայականների, լիցենզիաների և այլ հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ (առկայության դեպքում),
9. Ամփոփ տեղեկություններ սույն ծառայության մեջ ներգրավված անձնակազմի վերաբերյալ, այդ թվում՝ հղումներ որակավորման վկայագրերին և այլ հիմնավորող փաստաթղթերին (առկայության դեպքում):

## Տվյալներ կազմակերպության վավերապայմանների մասին

**ԲՈԼՈՐ ԴԱՇՏԵՐԸ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ**

Ում՝ **ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ**

Ումից՝ ______________________________________________

(կազմակերպության անունը)

Ամսաթիվ՝ ____/______________/ 2017թ.

**1. Կազմակերպության լրիվ անվանումը՝**

______________________________________________

**2. Կազմակերպության ղեկավարի պաշտոնը և անուն, ազգանունը(պայմանագիրը ստորագրող)՝**

______________________________________________

**3. Կազմակերպության իրավաբանական և ֆիզիկական հասցեները (եթե տարբերվում են)՝**

Գործունեության հասցե՝

______________________________________________

Իրավաբանական հասցե՝

______________________________________________

**4. Կազմակերպության բանկային տվյալները՝**

Բանկի լրիվ անունը.

______________________________________________

Բանկային հաշվի համարը.

| | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | |

**5. Կազմակերպության ՀՎՀՀ՝**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

**6. Հարկատեսակը՝** ______________________________________________

**7. Հեռախոսահամարներ՝**

Ֆիքսված ____________________ Բջջային ____________________

**8. Էլ-փոստ.** ______________________________________________

**Ստորագրված և կնքված է՝**

______________________________________________

(անուն, ազգանուն, պաշտոն )

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՍՈՒՅՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Է

**Սույնով հայտարարում և հավաստում եմ հետևյալը.**

1. Ես՝ ____________________________________________________ս, և ___________________________________________

______________________________________________________________________________________________

(ընկերության/ կազմակերպության լրիվ անվանումը՝ ըստ պետական գրանցման վկայականի)

(այսուհետ՝ Կազմակերպություն), որի ղեկավարն եմ հանդիսանում, սնանկ չենք, սնանկության, լուծարման կամ վերակազմակերպման գործընթացում չենք գտնվում, իմ և Կազմակերպության գույքը ծանրաբեռնված չէ այլ անձանց իրավունքներով, ձեռնարկատիրական գործունեությունը կասեցված չէ,

2. ես և Կազմակերպությունը ընդգրկված չենք որևէ դատական գործում, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացում, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մեղավոր չենք ճանաչվել պրոֆեսիոնալ գործունեության շրջանակում իրավախախտում կատարելու մեջ,

3. ստորև նշված ամսաթվի դրությամբ ես, իմ ընտանիքի անդամները և Կազմակերպությունը չունենք փաստացի և/կամ հնարավոր շահերի բախում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ որպես Մրցույթի կազմակերպչի հետ, ինչը կարող էր սահմանափակել Մրցույթի կազմակերպչի կողմից մրցութային հայտերի անկողմնակալ և անաչառ գնահատումը, իսկ այդպիսիք հայտնաբերելու դեպքում պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին,

4. ես և Կազմակերպությունը երբևէ չենք մասնակցել որևէ ահաբեկչական գործունեության, ինչպես նաև փողերի լվացման հետ կապված գործարքների, դատարանի վերջնական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր չենք ճանաչվել խարդախություն կատարելու, կոռուպցիոն գործունեության կամ հանցավոր խմբավորման մեջ ներգրավվելու մեջ,

5. այն դեպքում, եթե տեղի կունենա վերը նշված դրույթներից որևէ մեկի հետ կապված փոփոխություն, ես պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին։

Ամսաթիվ ___________________________

Ստորագրված և կնքված է ______________________________________________________________________________

*Անուն, ազգանուն, պաշտոնը*

_________________________

*Ստորագրություն*

Հավելված 2

ԳՆԱՌԱՋԱՐԿ

«———————————» ապրանքների ձեռքբերման վերաբերյալ

| Part Number | Product Description | PL | Q-ty | Price per one (including VAT) | Total Price (including VAT) |
|---|---|---|---|---|---|
| 681844-B21 | HP BLc7000 CTO 3 IN LCD Plat Enclosure | MV | 1 | | |
| E5Y41A | HPE OV 3yr 24x7 Encl FIO Phys 16 Svr Lic | FS | 1 | | |
| 863442-B21 | HPE BL460c Gen10 10Gb/20Gb FLB CTO Blade | MV | 4 | | |
| 863442-B21 0D1 | Factory integrated | MV | 4 | | |
| 872015-L21 | HPE BL460c Gen10 Xeon-G 5120 FIO Kit | MV | 4 | | |
| 872015-B21 | HPE BL460c Gen10 Xeon-G 5120 Kit | MV | 4 | | |
| 872015-B21 0D1 | Factory integrated | MV | 4 | | |
| 815100-B21 | HPE 32GB 2Rx4 PC4-2666V-R Smart Kit | SI | 32 | | |
| 815100-B21 0D1 | Factory integrated | SI | 32 | | |
| 868818-B21 | HPE 480GB SATA 6G RI SFF SC DS SSD | SI | 8 | | |
| 868818-B21 0D1 | Factory integrated | SI | 8 | | |
| 700066-B21 | HPE FlexFabric 20Gb 2P 630FLB FIO Adptr | MV | 4 | | |

FINCA®

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 804367-B21 | HPE Smart Array P204i-b SR Gen10 Ctrlr | MV | 4 | | |
| 804367-B21 0D1 | Factory integrated | MV | 4 | | |
| 875238-B21 | HPE 12W BL Smart Storage Battery | SH | 4 | | |
| 875238-B21 0D1 | Factory integrated | SH | 4 | | |
| 863442-B21 | HPE BL460c Gen10 10Gb/20Gb FLB CTO Blade | MV | 2 | | |
| 863442-B21 0D1 | Factory integrated | MV | 2 | | |
| 872010-L21 | HPE BL460c Gen10 Xeon-S 4114 FIO Kit | MV | 2 | | |
| 872010-B21 | HPE BL460c Gen10 Xeon-S 4114 Kit | MV | 2 | | |
| 872010-B21 0D1 | Factory integrated | MV | 2 | | |
| 815100-B21 | HPE 32GB 2Rx4 PC4-2666V-R Smart Kit | SI | 16 | | |
| 815100-B21 0D1 | Factory integrated | SI | 16 | | |
| 868818-B21 | HPE 480GB SATA 6G RI SFF SC DS SSD | SI | 4 | | |
| 868818-B21 0D1 | Factory integrated | SI | 4 | | |
| 700066-B21 | HPE FlexFabric 20Gb 2P 630FLB FIO Adptr | MV | 2 | | |
| 804367-B21 | HPE Smart Array P204i-b SR Gen10 Ctrlr | MV | 2 | | |
| 804367-B21 0D1 | Factory integrated | MV | 2 | | |
| 875238-B21 | HPE 12W BL Smart Storage Battery | SH | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 875238-B21 0D1 | Factory integrated | SH | 2 | | |
| 571956-B21 | HP BLc VC FlexFabric 10Gb/24-port Opt | UZ | 2 | | |
| 571956-B21 0D1 | Factory integrated | UZ | 2 | | |
| AJ716B | HPE 8Gb Short Wave B-Series SFP+ 1 Pack | 1Y | 4 | | |
| AJ716B 0D1 | Factory integrated | 1Y | 4 | | |
| 733460-B21 | HPE 6X 2650W Plat Ht Plg FIO PS Kit | MV | 1 | | |
| 456204-B21 | HP BLc7000 DDR2 Encl Mgmt Option | MV | 1 | | |
| 456204-B21 0D1 | Factory integrated | MV | 1 | | |
| 677595-B21 | HP BLc 1PH Intelligent Power Mod FIO Opt | MV | 1 | | |
| 517520-B21 | HP BLc 6X Active Cool 200 FIO Fan Opt | MV | 1 | | |
| H7J34A3 | HPE 3Y Foundation Care 24x7 Service | 72 | 1 | | |
| H7J34A3 7FX | HPE c7000 Enclosure Support | 96 | 1 | | |
| H7J34A3 W4C | HPE BL460c Gen10 Support | 96 | 6 | | |
| HA114A1 | HP Installation and Startup Service | UW | 1 | | |
| HA114A1 5FY | HP Startup BladeSystem c7000 Infrast SVC | UW | 1 | | |
| TK741A | HP 2.5m 250V 16A C19-C20 3PC IPD Jpr Crd | SH | 2 | | |
| HA124A1 | HP Technical Installation Startup SVC | UW | 1 | | |

FINCA®

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| HA124A1 56H | HPE Blad Sys c7000 Encd Ntwk Startup SVC | 7G | 1 | | |
| K2Q36B | HPE 3PAR 8200 2N+SW Storage Field Base | 4A | 1 | | |
| K2P94B | HPE 3PAR 8000 1.8TB+SW 10K SFF HDD | 4A | 18 | | |
| K2P94B 0D1 | Factory integrated | 4A | 18 | | |
| N9Y06B | HPE 3PAR 8000 400GB+SW SFF SSD | 4A | 4 | | |
| N9Y06B 0D1 | Factory integrated | 4A | 4 | | |
| E7Y71A | HPE 3PAR 8000 SFF(2.5in) Fld Int Dr Encl | 4A | 1 | | |
| K2P94B | HPE 3PAR 8000 1.8TB+SW 10K SFF HDD | 4A | 18 | | |
| K2P94B 0D1 | Factory integrated | 4A | 18 | | |
| N9Y06B | HPE 3PAR 8000 400GB+SW SFF SSD | 4A | 4 | | |
| N9Y06B 0D1 | Factory integrated | 4A | 4 | | |
| HA114A1 | HP Installation and Startup Service | UW | 1 | | |
| HA114A1 5XU | HPE Startup 3PAR 8200 2N Fld Int Bas SVC | UW | 1 | | |
| HA114A1 5XZ | HPE Startup 3PAR 8000 Fld Int Dr Enc SVC | UW | 1 | | |
| L7F20AAE | HPE 3PAR All-in S-sys SW Current E-Media | 43 | 1 | | |
| H7J34A3 | HPE 3Y Foundation Care 24x7 Service | 72 | 1 | | |
| H7J34A3 W3G | HPE 3PAR 8200 2N+SW Storage Base Support | 6W | 1 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| H7J34A3 WSF | HPE 3PAR Internal Entitlement Supp | 6W | 1 | | |
| H7J34A3 X84 | HPE 3PAR 8000 1.8TB+SW 10K SFF HDD Supp | 6W | 36 | | |
| H7J34A3 X8E | HPE 3PAR 8000 400GB+SW SFF SSD Supp | 6W | 8 | | |
| H7J34A3 YTJ | HPE 3PAR 8000 Drive Encl Support | 6W | 1 | | |
| QK734A | HPE Premier Flex LC/LC OM4 2f 5m Cbl | 1Y | 4 | | |
| H0JD6A1 | HPE 3PAR SSD Extended Replacement SVC | UW | 8 | | |
| HA124A1 | HP Technical Installation Startup SVC | UW | 1 | | |
| HA124A1 56W | HPE Startup 3PAR 8K All Inc Sngl Sys SVC | UW | 1 | | |
| JG510A | HPE 5900AF 48G 4XG 2QSFP+ Switch | NT | 2 | | |
| H7J34A3 | HPE 3Y Foundation Care 24x7 Service | 72 | 1 | | |
| H7J34A3 R4W | HPE 5900AF-48 2QSFP Switch Support | 7G | 2 | | |
| JG081C | HPE X240 10G SFP+ SFP+ 5m DAC Cable | NT | 4 | | |
| JG326A | HPE X240 40G QSFP+ QSFP+ 1m DAC Cable | NT | 2 | | |
| JC680A | HPE 58x0AF 650W AC Power Supply | NT | 4 | | |
| JC680A B2C | JmpCbl-ROW | NT | 4 | | |
| JC682A | HPE 58x0AF Bck(pwr) Frt(prt) Fan Tray | NT | 4 | | |
| AF525A | HPE Intelligent 7.3kVA/60309/INTL PDU | SH | 2 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| AF528A | HP 5xc13 PDU Extension Bars Kit | SH | 3 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | |

Առաջարկում ենք մատակարարել/տրամադրել վերոնշյալ ապրանքները՝ Պայմանագիրը կնքելուց հետո՝ _________________________ օրացուցային օրվա ընթացքում:

Պահանջվող կանխավճար՝ ____________________________________________________________ ՀՀ դրամ (լրացնել անհրաժեշտության դեպքում):

___________________________________________________ *Մասնակցի / կազմակերպության անվանումը*

___________________________________________________ *Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը*

«_____» ____________________ 2017թ.

Կ.Տ.